ՄԻՋՆԱԴԱՐԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԸ

Հայ ժողովրդի կրթութեան, մշակոյթի պատմութիւնը վկայում է, որ հնում, մասնաւորաբար, միջնադարում մենք ունեցել ենք բարձր տիպի զանազան դպրոցներ՝ վարդապետարաններ, վարժարաններ, ճեմարաններ, համալսարաններ, որոնք պատրաստել են եկեղեցական գործիչներ, մանկավարժներ, արուեստի ու գիտութեան մասնագէտներ։ Միջնադարեան համալսարաններից շատերը աստիճանաբար վերածուել են կատարեալ համալսարանների, որով եւ հաստատապէս դրուել են հայկական բարձրագոյն կրթութեան հիմքերը[1]*։*

Սոյն յօդուածի նպատակն է ամփոփ ներկայացնել եւ ըստ արժանւոյն գնահատել հայ միջնադարեան համալսարանների (Նարեկաւանքի վարդապետարան, Սիսի համալսարան, Նոր Գետիկի կամ Գոշավանքի համալսարան, Անիի վարդապետարան, Հաղպատի բարձրագոյն դպրոց, Տաթեւի համալսարան, Գլաձորի համալսարան, Դրազարկի վարդապետարան) *գործունէութիւնը։ Այսպէս՝*

Նարեկի (Նարեկավանքի) վարդապետարան

Վանայ լճի հարաւային ափերին տարածուած Ռշտունիք գաւառի Նարեկ գիւղում գործել է Նարեկի (Նարեկավանքի) վարդապետարանը։ Որպէս հիմնադրման դար նշւում է X-ը, իսկ հիմնադիրն է համարւում նշանաւոր փիլիսոփայ ու մտածող Անանիա Նարեկացին, որն էլ դարձել է առաջին ուսուցչապետը։ Նարեկի վարդապետարանը յիշատակւում է որպէս հայ գրչութեան եւ մանրանկարչութեան յայտնի կենդրոն (X-XI դարերի)։ Զարգացած էին երաժշտագիտութիւնն ու մեկնաբանական արուեստը։ Անանիա Մոկացու մահուանից յետոյ (978 թ.) ուսուցչապետ է դարձել նրա արժանաւոր աշակերտ, աշխարհահռչակ Գրիգոր Նարեկացին (նրա հետ Նարեկավանքում ուսուցանել են նաեւ իր եղբայրները)։ Նարեկի վարդապետարանի յայտնի սաներից էր X դ. պատմիչ Ուխտանէսը, որն իր ուսուցիչ Անանիա Նարեկացու յանձնարարութեամբ գրել է «Հայոց պատմութիւն» երկը։

Սիսի համալսարան

Կիլիկիայի հայկական պետութեան մայրաքաղաքում յայտնի քաղաքական եւ հոգեւոր գործիչ Ներսէս Լամբրոնացին XII դարի վերջերին հիմնադրել է աշխարհիկ համալսարան, որտեղ կրթութիւն են ստացել ժամանակի հայ նշանաւոր գիտնականներ ու պետական գործիչներ։ Այս համալսարանում գիտական գործունէութիւն են ծաւալել Մխիթար Գոշը, Կիրակոս Գանձակեցին։ «Եօթ ազատ արուեստներից» բացի դասաւանդւել է պատմագրութիւն, ազգային եւ թարգմանական գրականութիւն, փիլիսոփայութիւն եւ այլն։ Ուսումնառութեան իտէալը աթենական կրթութիւն էր։ Սա վկայում է այն մասին, որ Մայր Հայաստանում եւ Կիլիկեան Հայաստանում վերածնունդն աւելի վաղ է սկսուել։

---

[1] **Յ. Սիմոնեան**, Հայ մանկավարժութեան պատմութիւն, Երեւան, 2012, էջ 59։

Նոր Գետիկի կամ Գոշավանքի համալսարան

Այս համալսարանը հիմնադրել է յայտնի առակագիր Մխիթար Գոշը XII դարի վերջին Նոր Գետիկի վանական համալիրում, որն յետագայում կոչուել է Գոշավանք։ Դասաւանդուել են հայոց եւ օտար լեզուներ (յունարէն, լատիներէն), քերականութիւն, փիլիսոփայութիւն, ճարտասանութիւն, երաժշտութիւն, գրչութեան արուեստ, նկարչութիւն։ Սաները ստանում էին գիտնականի՝ վարդապետի աստիճան։ Մեծ վերելք է ապրել XIII դարում։ Նոր Գետիկի կամ Գոշավանքի համալսարանում են ուսում ստացել հայ մշակոյթի ականաւոր գործիչներ Վանական Վարդապետը եւ Կիրակոս Գանձակեցին, ովքեր իրենց հիմնած դպրոցներում շարունակել են Գոշավանքի համալսարանի աւանդները։ Գանձակեցին Գոշի մասին գրել է. «Եւ նրա իմաստութեան համբաւը տարածուեց ամբողջ աշխարհում, եւ բազմաթիւ սովորողներ էին նրա մօտ ուսանում»։ Գոշավանքում ընդօրինակուել եւ ստեղծուել են բազմաթիւ ձեռագրեր, որոնք պահուել են վանքի գրատանը։

Անիի վարդապետարան

Անիի բարձրագոյն դպրոցը հիմնադրուել է XI դարում եւ գործել է մինչեւ XIII դարը։ Այն հայ մտաւորականութեան պատրաստման, գիտութեան ու արուեստի զարգացման կարեւորագոյն օջախ էր։ Բարձրագոյն դպրոցն աչքի էր ընկնում իր աշխարհիկ բնոյթով։ Դասաւանդւում էին արտաքին-իմաստասիրական, մաթեմատիկական, ճարտարապետա-կառուցողական, բժշկա-բնագիտական գիտութիւններ։ Տեւական ժամանակ դպրոցը ղեկաւարել են Գրիգոր Մագիստրոս Պահլաւունին (XI դարում), ապա՝ Հաղպատից հրաւիրուած Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէրը (XI դարի վերջից եւ XII դարասկզբում)։ Վերջինիս բաբունապետութեան տարիներին վարդապետարանը ունեցել է բազմաթիւ շրջանաւարտներ։ Այս դպրոցի սաներից են եղել Սամուէլ Անեցին, Գրիգոր Փակակալը եւ ուրիշներ։

Հաղպատի բարձրագոյն դպրոց

Հաղպատի վանքի կառուցումից անմիջապէս յետոյ (976 թ.) նրա հիմնադիր եւ առաջին վանահայր, նշանաւոր գրիչ Սիմէոն վարդապետը հիմնեց Հաղպատի դպրոցը։ Այստեղ դասաւանդւում էին փիլիսոփայութիւն, քերականութիւն, հռետորութիւն, աստուածաբանութիւն եւ այլ գիտութիւններ։ Դպրոցի նշանաւոր բաբունապետերից էին փիլիսոփայ, տոմարագէտ Յովհաննէս Իմաստասէրը, Սամուէլ Անեցին, Դաւիթ Քոբայրեցին, Մխիթար Քոբայրեցին եւ այլք։ Հաղպատի դպրոցում հիմնականում ծաղկեց գրչութեան արուեստը։ Այստեղ ընդօրինակւում եւ ստեղծւում էին հայ մանրանկարչութեան հոյակապ յուշարձաններ։ Յիշատակենք «Հաղպատի Աւետարանը», որը մանրանկարչական արուեստի լաւագոյն նմոյշներից է։ Հաղպատի բարձրագոյն դպրոցը գոյատեւեց մի քանի դար եւ սերունդներին պարգեւեց տասնեակից աւելի արժէքաւոր ձեռագրեր։

Դրազարկի վարդապետարան

Կիլիկեան Հայաստանի ամենահնագոյն ուսումնագիտական կեդրոնը՝ Դրազարկի (Թրազարկ) վարդապետարանը, հիմնել է Թորոս Ա. իշխանը (1100-1129) XII դ. սկզբին Տաւրոս լեռների ստորոտին՝ Սիս մայրաքաղաքի մօտակայքում գտնուող համանուն վանքում։ Դրազարկը հռչակուած էր նաեւ որպէս մանրանկարչութեան եւ ծաղկողական արուեստի կեդրոն, ունեցել է լեզուների բարձրորակ դասաւանդման համբաւ։

Վարդապետարանի սաներից էր յայտնի մանրանկարիչ Սարգիս Պիծակը։ Մեծ համբաւ ունէին Դրազարկի երաժշտագիտութեան ուսուցիչները։ Նրանցից էին Դրազարկի ուսուցչապետներ Թորոս Երաժիշտը (Թորոս դասապետ) եւ Յովսէփ Երաժշտապետը։ Այստեղ ընդօրինակուել են բազմաթիւ երգարան մատեաններ՝ խազագրուած տաղերով։ Դրազարկի վարդապետարանը յայտնի էր նաեւ որպէս լեզուների դասաւանդման կարեւորագոյն կեդրոն։ Այստեղից են դուրս եկել Կիլիկեան պետութեան բազմաթիւ դիւանագէտներ։ XIII դ. առաջին կէսին Դրազարկի ուսուցչապետն էր Հեթում Ա. (1226-1270) արքայի եղբայր Բարսեղը, որի իրաւասութեանն էին յանձնուած թագաւորութեան արտաքին յարաբերութիւնները։ Վերոյիշեալ Թորոս դասապետը XIII դ. վերջին եղել է Հայոց դեսպան Անգլիայում։ Դրազարկի հետ է կապուած միջնադարի խոշորագոյն առակագիր Վարդան Այգեկցու գործունէութիւնը։

Գլաձորի համալսարան

Միջնադարեան Հայաստանի նշանաւոր ուսումնագիտական կեդրոնը՝ Գլաձորի համալսարանը, որը դասւում է միջնադարեան Եւրոպայի համալսարանական հաստատութիւնների շարքին, հիմնադրուել է 1282 թուականին Ներսէս Մշեցու կողմից, գործել մինչեւ 1340-ական թթ.։ Համալսարանը հովանաւորել են Պռոշեան եւ Օրբելեան իշխանական տները, ինչպէս նաեւ Սիւնիքի եկեղեցական իշխանութիւնը։ Նրա բազմամեայ ղեկավարը (մինչեւ 1331-ը) եղել է Եսայի Նշեցին։ Վերջինիս ռեկտորութեան տարիներին համալսարանը համարւում էր «Յիսուսական համալսարան», «Երկրորդ Աթենք» եւ որպէս գիտութեան ու մշակոյթի կեդրոն՝ «Մայրաքաղաք ամենայն իմաստից»[2]։ Գլաձորը «փայլեր որպէս զարեգակն ի վերայ աշխարհի... զի ազգս հայկազեան մեծ պարծանս ուներ զսա ի վերայ ամենայն ազգի»։ *Համալսարանն ունէր ներքին կանոնադրութիւն, ուսումնագիտական աստիճանաւորում, աւարտաճառերի պաշտպանութիւն։ Իր բնոյթով ու թեքումով նմանուել է հասարակագիտական կամ արուեստից գիտութիւնների համալսարանի։ Դասաւանդուել են աստուածաբանութիւն, դիցաբանութիւն, իմաստասիրութիւն, մատենագիտութիւն, քերականութիւն, ճարտասանութիւն, տրամաբանութիւն, թուաբանութիւն, աստղաբաշխութիւն-տոմարագիտութիւն, երկրաչափութիւն[3]։ Ունեցել է երեք լսարան (մասնագիտացում)՝ ա. ուսումնարան ներքին եւ արտաքին գրոց, բ. գրչութեան արուեստի՝ մատենագիտութեան եւ մանրանկարչութեան, գ. խազագիտութեան եւ երաժշտութեան։ Գլաձորի համալսարանում դասաւանդել են շուրջ երկու տասնեակ ուսուցչապետներ եւ վարդապետներ, այդ թւում՝ Դաւիթ Սասնեցին, Գրիգոր, Մարտիրոս, Յովհաննէս, Կիրակոս ու Կիւրեղ բաբունապետները։ Գլաձորի համալսարանում ստեղծագործել եւ որպէս ուսուցիչներ աշխատել են նշանաւոր մանրանկարիչներ Թորոս Տարօնացին, Աւագը եւ Մոմիկը։ Ուսում ստանալու նպատակով այստեղ են ժամանել աշակերտներ Հայաստանի եւ Կիլիկիայի շատ վայրերից։ Հայկական ուսումնամշակութային կեդրոնների համար Գլաձորի համալսարանը պատրաստել է 350 ուսուցիչ-վարդապետներ։ Ուսման տեւողութիւնը եղել է 7-8 տարի՝ չհաշուած քահանայական կրթութեան տարիները։ Շրջանաւարտները պարտադիր քննութիւն են յանձնել դասընթացներից։ Շրջանաւարտներին վարդապետի աստիճանի շնորհումը տեղի էր ունենում հանդիսաւոր արարողութեամբ, հայցող թեկնածուները հանդես էին գալիս աւարտաճառերով։ Նրանք ստացել են «վարդապետական հրաման» կամ «վար-*

---

[2] Նոյն տեղում էջ 60։

[3] **Իր. Աւետիսեան**, **Հ. Զաքարեան**, Հայոց լեզու, Երեւան, 2012, էջ 526։

դապետական գաւազան», որը նրանց իրաւունք է տուել «դասասաց» լինելու[4]: Գլաձո- րում են գրուել ու գարդարուել տասնեակ ձեռագիր մատեաններ, որոնցից մի քանիսը պահւում են Մաշտոցի անուան մատենադարանում, Վենետիկի Մխիթարեանների մա- տենադարանում, Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքում, Լոնտոնի Բրիտանական Թան- գարանում եւ այլ վայրերի ձեռագրական հաւաքածոներում[5]:

Տաթեւի համալսարան

Սիւնեաց բարձր տիպի դպրոցը որպէս համալսարան յիշատակւում է 1380-ական թուականների սկզբներից: Գլաձորի համալսարանի փակուելու պատճառով Յովհան Որոտնեցին տեղափոխուել է Որոտնավանք, հիմնել դպրոց, ապա հաստատուել Տա- թեւում եւ, վերակառուցելով Տաթեւի կրթարան-վարդապետարանը, հիմք է դրել նոր, բարձր տիպի դպրոցի՝ համալսարանի: Նրա օրօք այն «անձուկ եւ խաւարեալ ժամանա- կիս փայլէր ուպէս զարեգակն ի վերայ աշխարհի»: Գոյատեւել է մինչեւ 1435 թ.: Այնտեղ էին հաւաքուել ժամանակի գիտուն եւ բանիմաց շատ վարդապետներ, մօտ 500 հոգե- ւորականներ, փիլիսոփաներ, երաժիշտներ, գրողներ, նկարիչներ, ինչպէս նաեւ ար- ւեստագէտներ ու արհեստաւորներ: Յետագայում միաբանների թիւը հասել է 1000-ի: Տաթեւի համալսարանը հովանաւորել է Օրբելեան իշխանական տունը, ինչպէս նաեւ Սիւնիքի եկեղեցական իշխանութիւնը: Ունեցել է երեք լսարան (ուսումնարան)՝ ու- սումնարան ներքին եւ արտաքին գրոց, գրչութեան արուեստի, երաժշտութեան: Առա- ջինում ուսումնասիրուել են փիլիսոփայութիւն, ճարտասանութիւն, քերականութիւն, բանաստեղծական արուեստ, մանկավարժութիւն, մայրենի լեզու, գրականութիւն, պատմութիւն եւ այլն, երկրորդում՝ գրչութեան արուեստ, գեղագրութիւն, գրքերի գե- ղարուեստական ձեւաւորում, մանրանկարչութիւն, երրորդում՝ հին երգ ու երաժշտու- թիւն, երաժշտութեան տեսութիւն[6]: 1386 թ. րաբունապետ է դարձել Գրիգոր Տաթեւա- ցին: Տաթեւացին կատարելագործել է համալսարանի ծրագիրը, կազմել դասագրքեր («Գիրք հարցմանց», «Գիրք քարոզութեան...», «Գիրք որ կոչի Ոսկեփորիկ»): Առանձ- նակի ուշադրութեան է դարձուել փիլիսոփայութեանը: Համալսարանն ունեցել է կանո- նադրութիւն, ուսումնագիտական աստիճանաւորում: Միշտապէս ունեցել է մեծ թուով սովորողներ (150-300 եւ աւելի), իսկ ուսման տեւողութիւնը 7-8 տարի էր՝ չհաշուած քահանայական կրթութեան տարիները: Սաներից են եղել Թովմա Մեծոփեցին, Առա- քել Սիւնեցին, Բարսեղ Բաղիշեցին, Մատթէոս Ջուղայեցին, Սիմէոն Եղուարդցին եւ ուրիշներ: Տաթեւի համալսարնն ունեցել է հարուստ մատենադարան, որը գոյատեւել է մինչեւ 1911-12-ը (մատենադարանի 140 ձեռագիր մատեաններ այժմ պահւում են Երե- ւանի Մատենադարանում)[7]:

Հայ միջնադարեան համալսարանների համակողմանի քննութիւնը մեծապէս կա- րող է նպաստել հայ մշակոյթի բազմաթիւ իրողութիւնների բացայայտմանը: Ժամանա- կի ոգու եւ պայմանների թելադրանքով մեր կրթական համակարգը որոշակի առաջա- դիմական մտայղացումներով է առաջնորդուել, ինչպէս՝ երբ Եւրոպական Միջնադա- րում մոլեգնում էր ինկվիզիցիան, երբ ճշգրիտ գիտութեան (բժշկութիւն, տիեզերագի- տութիւն...) ներկայացուցիչները հալածւում, խարոյկի էին հանւում, երբ նոյնիսկ կեն- դանիների հերձման փորձերը չէին հանդուրժւում, Հայաստանում ուսուցողական նկա-

[4] Նոյն տեղում էջ 526:

[5] **Ա. Աբրահամեան**, Գլաձորի համալսարանը, Երեւան, 1983, էջ 6:

[6] **Իւր. Աւետիսեան**, **Հ. Զաքարեան**, Հայոց լեզու, Երեւան, 2012, էջ 527:

[7] Քրիստոնեայ Հայաստան Հանրագիտարան. Երեւան, 2002, էջ 993:

տառումներով դիահերձմամբ ուսումնասիրում էին ներքին օրգանները (անատոմիայ, ֆիզիոլոգիայ...), դասախօսւում էին կենսա-բնագիտական այնիպիսի մտքեր, որոնց համար Եւրոպայում մի քանի անգամ խարոյկի կը հանէին, Կիլիկեան բժշկանոցներում թոյլատրւում էր յանցագործների վրայ փորձարկումներ անել (որպէս արդարացում մէկի տառապանքը շատերի բուժման միջոց կարող է դառնալ) եւ այլն[8]։ Առայսօր հայ միջնադարեան համալսարանների ուսումնասիրումը արդիական է. կարող են երեւան գալ քօղարկուած փաստեր, վարկածներ։ Վերջերս անդրադարձ է կատարուել հայագիտութեան մէջ առայժմ չլուծուած մի հարցի՝ Գլաձորի համալսարանի տեղորոշմանը։ Համալսարանի գտնուելու վայրի մասին պահպանուած բազմաթիւ վկայութիւնների, պատմական փաստերի, աղբիւրագիտական նիւթերի, կատարուած դիտարկումների հիման վրայ ներկայացուել է մի նոր վարկած[9]։

Այսպիսով, հայ մշակոյթի, կրթութեան, գիտութեան զարգացման ասպարէզում հսկայական նշանակութիւն են ունեցել միջնադարեան համալսարանները։ Վերոնշեալ նիւթը փաստում է, որ հայը բոլոր ժամանակներում է գիտակցել բարձրագոյն կրթութեան տեղն ու դերը, արժեւորել համակարգուած գիտելիքների ու գործնական հմտութիւնների նշանակութիւնը։

ՎԱԼՏԵՐ ՊԷՐՊԷՐԵԱՆ

ԵՊՀ ասպիրանտ, ՀՀ ԿԳՄՄՆ «ԿՁՆԱԿ» մասնագէտ

[8] **Յ. Սիմոնեան**, Հայ մանկավարժութեան պատմութիւն, Երեւան, 2012, էջ 64։

[9] Առաւել մանրամասն տե՛ս **Տ. Մկրտչեան**, Գլաձորի համալսարանի տեղորոշման նոր վարկած, Երեւան, 2016։